Պ. Ս.- Այսօր ես ունինք նոր անուններ: Օրինակի համար, Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի ուսանողներէն Սարգիս Քիրքեճեան եւ այլ երիտասարդներ, ինչպէս՝ Սայրի Քիրքեճեանն առաջ ճանդէս կապ Ստիւարտ Քիլէճեան, Սաօ Արեան, քանատահայ Սուրէն Զէքեճեան եւ ծարձակ ուրիշ ընձիւղներ, որոնք համար միշտ տեղ ունեցած է կ'է պիտի ունենայ «Քազին»ը:

«Ա.Ջ.Գ.Ա.Կ.»- «Քազին»ի մէջ ակնբախ է ներթերու կոկիկ դասաւորումը եւ ներթերու յայլազանութիւնը իւրաքանչիւր թիւի մէջ: Շատ ժամանակ կը խլէ՛ ձեզմէ այս պարագան:

Պ. Ս.- Ի հարկէ, ատրոնց վրայ պէտք է աւելցընել տակաւին ուրիշ կէտ մը, որ «Քազին» ունեցած է գրական ամուր կեցուածք եւ հայ գրականութեան գործերն ու գրագէտները բացառիկներով ծանօթացնելու եւ գրական ու մարդկային անոնց իրաւունքները պաշտպանելու առաքելութիւն: Եւ մասնաւորաբար իր այս անհաշանդիր ու անգիջող յատկութիւններուն համար «Քազին» առաջին օրէն բացառիկ յարգանք վայելած է Հայաստանի մէջ ու կը վայելէ այսօր:

«Ա.Ջ.Գ.Ա.Կ.»- Բառասնամեայ վաստակ մը իրապէս նշանակալից է սփիւռքահայ գրական ամասերթի մը համար: Յառաջիկայ տարիներուն համար ի՞նչ պիտի ըլլայ «Քազին»ի ընթացքը:

Պ. Ս.- Երթը պիտի շարունակուի այնպէս, ինչպէս ընթացած է՝ լայնախոհութեամբ ու այլազանութեան սկզբունքներով: «Քազին» կը հետեւողական հետաքրքրութեամբ ու հետազոտութիւններով նոր ուժեր գտնել եւ գանձեր իր շուրջ համախմբել: Կը կարծեմ, թէ՛ թերթը ունի յուսատու ուժեր ձեւաւորելու կարելու առաքելութիւնը:

«Ա.Ջ.Գ.Ա.Կ.»- Կը կարծե՞ք, թէ՛ երկրային անբարենպաստ պայմաններուն մէջ զիւրից պիտի ըլլայ սրտեւ «Քազին»ի գոյութիւնը:

Պ. Ս.- «Քազին»ը չի կրնար գոյութիւն չունենալ, անկախ ժամանակի նարարենպաստ հովանի ու իր ընթերցողներու վերջին ու իր ընթերցողներու ցնցառ թիւէն: Հովանաւոր ուժերուն ու բազմաթիւ ընթերցողներու պէս՝ ես ինք ալ համոզուած եմ, որ «Քազին»ը անհրաժեշտութիւնն է մըն է Սփիւռքի մէջ եւ որեւէ կապած պէտք է ունենայ անոր գոյութեան առնչութեամբ...

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՍԵԱԿԻԹԱՅԻՆ ՍԻՈՒԹԻՆ
Հովանաւորութեամբ՝
Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԵՐԱՓԱՌԻՆ
Կազմակերպութեամբ՝
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՅՈՒՐԵՆԵՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ
ՄԵՏԱՐԱՆԸ
«ՔԱԳԻՆ» ԱՄՍԱԳԻՐԻ ԸԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԵՒ
ԳՐԱԳԵՏ ՊՕՂՈՍ ՍՆԱՅԵԱՆԻ ԸԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ
ՎԱՍՏԱԿԻՆ
Տեղի կ'ունենայ Կիրակի, 9 Մարտ 2003, ժամը 11:30ին,
«Յակոբ Տեր Մելքոնեան» քառերասրահին մէջ:
ՀՐԱԻՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



«ՕՓԵՐԱ 7» «ՊՐԱՌՈՒՉԵՐ»Ը ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ



Պրաուզերները ճարտարարուեստին մէջ այլընտրանքներու մասին խօսելու անհրաժեշտ է թուի ըլլալ: Ի վերջոյ, «Ինթընէթ քրօմիոսթը» ինքզինք տեղաւորած է «Ուիլիսոն» դրուժեմը բանող բոլոր համակարգիչներուն մէջ եւ կարելի չէ ջնջել զայն: Ի դէպ, փուլթանք աւելցնելու, թէ «քրօմիոսթը» լաւ պրաուզեր մըն է, որ կը գոհացնէ համացանցը օգտագործողին գրեթէ բոլոր կարիքները:

Սակայն այս չի նշանակեր, թէ «Ինթընէթ քրօմիոսթը» եւ պրաուզեր բառերը նոյնանիշ դարձած են: «Նեթսքէյփ Նեթիկէյթը» եւ մասամբ՝ «Օփերա» պրաուզերները իրենց ընձեռած կարելիութիւններով ետ չեն մնար «Ինթընէթ քրօմիոսթը»էն:

Օփերայի պաշտօնական կայքէջն (www.opera.com) ոչ միայն կարելի է արձանագրել ծրագրի նորագոյն տարբերակները, այլ նաեւ օգտագործելով այնտեղ տեղադրուած ուղեցոյցը՝ աւելի մօտէն ճանչնալ ծրագրի անուշադրուած օգտուր քաղելու ձեւերը: «Օփերա» պրաուզերին մասին շահեկան տեղեկութիւններ կարելի է գտնել նաեւ <http://my.opera.com/forums> հասցէով կայքին մէջ:

«Օփերա»ի գլխաւոր առաւելութիւնը կը հանդիսանայ անոր արագութիւնը: Պրաուզեր նաեւ նշանակաւոր է պատահալի վրայ միաժամանակ մէկէ աւելի կայքեր ցոյց տալու իր կարողութեամբ: Սակայն այսօր քանակ չեն սահմանափակուիր անոր կարողութիւնները, ինչպէս պիտի տեսնէ Օփերայի նորագոյն տարբերակ «Օփերա 7»ն օգտագործողը:

Պրաուզեր նախ եւ առաջ ենթարկուած է «գեղագիտական» փոփոխութիւններու: «Օփերա 7»ի կոճակներ 3D դրուժեմը են եւ անոնց երեւոյթը կարելի է փոխել ըստ ճաշակի:

Իր այս գեղեցիկ երեւոյթին տակ «Օփերա» նոյնքան գոհացնող կարելիութիւններ կը հրամայէ զայն օգտագործողին: Ծրագրի օժտուած է ե-նամակի դրուժեմը, որ կ'ընդգրկէ «սփէյթ ֆիլթըր», ինչպէս նաեւ կրնայ դործել «Փօփ-3» «Այմէֆ» եւ «Ի. Էս. Էմ. Թի. Փի.» դրուժեմներով: Պրաուզերը կրնայ միաժամանակ ցոյց տալ մէկէ աւելի կայքեր եւ այդ «tile» կամ «cascade» կոճակներու օգտագործումով: Ծրագրի նաեւ օժտուած է «նոթիլսթ»ով, ուր կարելի է մեքենայաբար արձանագրել նախասիրած կայքերու հասցէները:

«ՆՈՔԻԱ» ԶԵՌՆՈՑ ԿԸ ՆԵՏԷ «ՆԻՆԹԵՆՏՕ»Ի



Ելեկտրոնային խաղերու փոքր ծաւալ ունեցող սարքերու ճարտարարուեստին մէջ անմրցելի անուն մըն է «Նինթենտօ» ընկերութեան «Կէյմպոյ»ը: Սակայն ըջիջային հեռաձայններու արտադրութեան հսկան «Նոթիա» մօտ տեսնել հրապարակ պիտի իջեցնէ «Էն. Կէյմ» անունը կրող «Ճի. Էս. Էմ.» ըջիջային հեռաձայնը, որ միաժամանակ յիշողութեան փոքր քարտերու վրայ տեղադրուած փիտէօ-խաղեր ըմբռնելու կարելիութեամբ օժտուած է: Աւելին՝ Պրոլոնթ անթել հաղորդակցութեան դրուժեման օգտագործումով կարելի պիտի ըլլայ, որ մէկէ աւելի անձեր միասնաբար խաղան տուեալ խաղ մը:

Սարքը պիտի վաճառուի 100-200 տողարի:

www.aztagdaily.com

«ՍԼԷՄԸՐ» ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԺԱՏՐԸ՝ «ԱՆԿԻՆԱԴԱՐՁ»

Վերջերս աւարտած ուսումնասիրութեան մը համաձայն, Յունուար 25ին համացանցի վրայ տարածուի սկսած «Սլէմըր» համակարգչային ժառանգը, որ կը պատկանի «որդ» անունով կրող ժառանգը ընտանիքին, համացանցի պատմութեան ամէնէն արագ տարածուող ժառանգն է եւ իրաւաւորը պիտի լինի «որդ» երգիչը:

Ուսումնասիրութիւնը, գոր միասնաբար կատարած են համակարգչային անվտանգութեան ընկերութիւններ եւ համալսարաններ, կ'ըսէ, թէ «Սլէմըր»ի տարածման առաջին 3 վայրկեաններուն ժառանգը վարակուող համակարգիչներու թիւը կը կրկնապատկուէր իւրաքանչիւր 8,5 երկվայրկեանը անգամ մը:

Վարակուելի այս արագութեամբ 250 անգամով աւելի է «Քոտ Ռէտ» ժառանգը, որ 2001ի կէսերուն համացանցի վրայ տարածուեցաւ, եւ որուն վարակած համակարգիչներուն թիւը կը կրկնապատկուէր իւրաքանչիւր 37 վայրկեանը անգամ մը:

Համացանցին վրայ տարածուի սկսելէն 10 վայրկեան ետք 75 հազար համակարգիչներ արդէն վարակուած էին:


Ժառանգի արագութեան պատճառը, ուսումնասիրութեան համաձայն, անոր փոքր ծաւալն էր: «Սլէմըր» 376 պայթ էր միայն, մինչ «Քոտ Ռէտ» 4 քիլոպայթ, իսկ այլ փոփոխութեամբ ժառանգը «Նիմոս» 37 քիլոպայթ: Սակայն, ուսումնասիրութեան համաձայն, նոյնինքն ժառանգի արագ տարածումն է, որ պատճառ դարձած է, որ ժառանգը ժամանակի ընթացքին դանդաղի:

«ՎԱՍՏԱՑ ԶԱՅՆԵՆ» ԼՈՒՐԵՐՈՒ ԸՄԱՍՆԱԿԱՆՈՅՑ

Ժամը 8:30 - Լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրներ՝ ԱՐԱԲԵՐԸՆ
Ժամը 9:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԸՆ
Ժամը 10:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԸՆ
Ժամը 11:30 - Լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրներ՝ ՀԱՅԵՐԸՆ

Ժամը 12:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԸՆ/ամփոփ
Ժամը 2:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԸՆ/ամփոփ
Ժամը 4:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԸՆ

ԲԱՐԴԵՐԸ՝ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԻՄՅԱՆԴԻՄԱՆ



Բարդերը (պէքրի) կարելի է համարել ելեկտրոնային անթել սարքերու թոքերը: Առանց վերստին լեցւելու կարելիութիւն ունեցող (ռիչարճը) բարդերու, այսօրուան արհեստագիտական սարքերուն եւ կաճեթներուն մեծ մասը անգործնական եւ անգործածական պիտի ըլլար: Ընդ չափ պատճառով ալ վերստին լեցուող բարդերու արտադրութեան ճարտարարուեստը յարատեւ աշխուժութեան մէջ գտնուած է անցնող տարիներուն: Ծուկային 70 առ հարիւր կը գտնուի 3 ընկերութիւններու հակազդէին տակ՝ «Սանիօ», «Մոնի» եւ «Մաթսուչիթա»: Սակայն 3,36 միլիարդ տողարնոց այս շուկան այսօր, իր մեծ եւ փոքր ընկերութիւններով, կը գտնուի դժուարութիւններու դիմաց:

Մինչ «Լիթիում ալըն» բարդերը այսօր ամէնէն արդիականները կը նկատուին եւ լիովին կը գոհացնեն սարքերու կարիքները, սակայն, մեկնաբաններու համաձայն, սարքերը աւելի արագ կ'արդիականան, քան՝ բարդերու ճարտարարուեստը: Եւ մինչ անթել սարքերը, ինչպէս՝ ըջիջային հեռաձայններ, աւելի կարելիութիւններ ընձեռող եւ ծաւալով աւելի փոքր կը դառնան, բարդերու երկարակեցութիւնը կարելի է հարց կը դառնայ եւ կարիքը կը զգացուի «Լիթիում ալըն» բարդերէն աւելի լաւ գտնուելու՝ ծաւալի եւ երկար դիմանալու կարողութեան առումներով:

Տրուած ըլլալով, որ բարդերու պատրաստութեան ճարտարարուեստը տեղափոխուի մէջ է, շարք մը արդիական սարքերու պատրաստութիւնը առժամաբար դադարեցուած է: «Արհեստագիտական յեղաշրջում մը հարկաւոր է, որպէսզի այս բացը կարելի ըլլայ փակել», կ'ըսէ մասնագէտ մը:

Սակայն «Լիթիում ալըն» դրուժեմը փոխարինող մը գտնելը այնքան ալ դժուար չի թուի ըլլալ: Որոշ յոյսեր կապուած են ջրածին օգտագործող բարդերու, արհեստագիտութիւն մը, որ այսօր կ'օգտագործուի կենսոլորտը մաքուր պահող ինքնաշարժներ պատրաստողներու կողմէ: Եթէ կարելի ըլլայ այս տեղեկութիւնը ապահով ձեռով օգտագործել եւ փոքր ծաւալի բարդեր պատրաստել, կարելի է նման բարդով մը ամբողջ 20 ժամ աշխատել լէփթփի մը դիմաց, առանց բարդը լիցքաւորելու կարիքը զգալու:

Լաւատեսներ կ'սկսկական, թէ այս դրուժեմը յաւաքիկայ քանի մը տարիներուն դրուի հանրութեան տրամադրութեան տակ, սակայն կասկածամիտները շատ են: «Սանիօ» ընկերութեան մասնագէտներէն Միթսուրու Հոնմայի համաձայն, այս արհեստագիտութիւնը առնուազան 10 տարի կ'ուզէ հանրութեան մատչելի դառնալու:

Ուրեմն բարդեր լիցքաւորող սարքերը պէտք է միշտ մեր հետ ունենանք...

«ԱԶԴԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԴԱԿ»ի հետ կապուելու համար հետաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՆՆԵՐ

«ՏԻ. ՎԻ. ՏԻ. ՓԼԷՅԸՐ»Ը՝ ՕՐՈՒԱՆ ՍԱՐՔԸ

Հակառակ այն փաստին, որ «Տի. Վի. Տի. Փլէյ»-ը ներքին հրապարակի վրայ կը գտնուին ոչ աւելի քան 6 տարի է ի վեր, անոնք արդէն դարձած են ամէնէն արագ վաճառուող ելեկտրոնային սարքը, որ երբեք ստեղծուած է:

Շուրջ հարիւր տողարի այսօր կարելի է գնել «կոկիկ» «Տի. Վի. Տի. Փլէյ» մը, իսկ յիսուս տողար աւելի վաճառուող առաւել կարելիութիւններ ընձեռող փլէյ» մը կրնայ դառնալ յաճախորդին սեփականութիւնը:

«Տի. Վի. Տի. Փլէյ» մը գնելու ընթացքին հարկ է ի մտի ունենալ, թէ նախընտրաբար սարքը պէտք է օժտուած ըլլայ ձայնի արտադրութեան մէկէ աւելի դրուժեմներով: Ձայնի թուազրային դրուժեմը որակի իմաստով կը գերազանցէ «Ար. Սի. Էյ. քոն-նէքթըր»ներով ձայնային դրուժեմները: Միւս կողմէ, «թուազրային վիտէօ գուժ» կամ «քարտօքէ» կարելիութիւնները խորքին մէջ այդքան ալ կարեւոր չեն. սա կը նշանակէ, թէ միշտ չէ, որ «տաղանդներով» շուրջուած սարքը լաւագոյնն է:

«Տի. Վի. Տի. Փլէյ»ներու արձանագրութեան կարելիութիւնը ունեցող փլէյ»ները նոյնպէս լայն տարածում գտած են: Այնտեղ «Տի. Վի. Տի. - Ար.» դրուժեմները ինքզինք հաստատած է իրեն, առայժմ, ամէնէն գործնական ու տարածուածը, սակայն «Տի. Վի. Տի. Ար.» միայն մէկ անգամ կրնայ արձանագրութիւն կատարել տուեալ «Տի. Վի. Տի.»ի մը վրայ: Միւս կողմէ, «Տի. Վի. Տի. Ար. Տապլետ»ի միջոցով կարելի է միեւնոյն Տի. Վի. Տի. ին վրայ արձանագրութիւն կատարել ետք զայն ջնջել եւ այլ արձանագրութիւններ կատարել: Դժբախտաբար այս դրուժեմը տակաւին համաշխարհային տարածում չէ գտած, եւ կարգ մը փլէյ»ներու վրայ այս սարքով կատարուած արձանագրութիւնները կրնան չգործել:

«Տի. Վի. Տի.»ներ աւելի սուղ կ'արժեն, քան՝ վիտէօ երկրները կամ «Վի. Սի. Տի.»ները, սակայն անոնց պատկերի եւ ձայնի որակի գերազանց է: Արդէն տարածում գտած են նաեւ «Տի. Վի. Տի.»ներ վարձող կեդրոններ, հեռեւաբար պայման չէ, որ ժապաւէն մը դիտելու համար անոր «Տի. Վի. Տի.»ն գնուի եւ ապա դարակներու մէջ փոշի կուտակէ...

«ՍՈՆԻ» ՊԻՏԻ ՀՐԱՊԱՐԱԿԷ ԶԵՂԱՇՐՋՈՂ «ՏԻ. ՎԻ. ՏԻ. ՌԻՔՈՐՏԸՐ» ՄԸ

Ճափոնական «Սոնի» ընկերութիւնը յայտարարեց, թէ յառաջիկայ ամիս հրապարակ պիտի իջեցնէ լազերային կապոյտ լոյսը օգտագործող աշխարհի առաջին «Տի. Վի. Տի. Ռիքորտը»ը, որուն շնորհիւ մէկ սկաւառակի վրայ կարելի պիտի ըլլայ արձանագրել երկու ժամ տեւողութիւն ունեցող ֆիլմեր եւ յայտագիրներ:

Սակայն բարձրորակ արձանագրութիւններ կատարող այս սարքը այդքան ալ աժան պիտի չըլլայ: Մինչ լազերային կարմիր լոյսը օգտագործող «աւանդական» «Տի. Վի. Տի.» արձանագրող սարքերը կը վաճառուին քանի մը հարիւր տողարի, այս նոր արտադրութիւնը պիտի արժէ 450 հազար եւն (3,800 տողար):

«Ռիքորտը»ը, որ պիտի ընդգրկէ նաեւ արբանեակային հեռափոխութիւններ յստակօրէն ստացող սարք մը, Ճափոնի վաճառատները պիտի հասնի Ապրիլի 10ին:

Կապոյտ լոյսով բանող «Ռիքորտը»ներ շատ աւելի խիտ կերպով կ'ամբարեն լսատեսողական տեղեկութիւններ, որուն շնորհիւ գերյստակ արձանագրութիւններ կարելի է կատարել: Միաժամանակ «Սոնի» վաճառքի պիտի դնէ «պլու-ուէյ տիք»եր, որոնք կրնան 23 կիկապայթ տեղեկութիւն ամբարել, մինչ այժմու «Տի. Վի. Տի.»ները կ'ամբարեն շուրջ 5 կիկապայթ:

Պատրաստեց՝ Խ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Ելոյթ կ'ունենայ

ՀԱԼԵՊԻ Համազգայինի «Ն. ԱՂԲԱԼԵԱՆ» մասնաճիւղի ՍԱՐԴԱՐԱՊԱՍ Այարախոււմը

Պարուսոյց՝ ՅՈՎԻԿ ԽԱԶԻԿԵԱՆ
Կազմակերպութեամբ՝

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱԻՈՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 15 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:30ին
եւ Կիրակի, 16 Մարտ 2003, երեկոյեան ժամը 7:00ին,
«3. ՏԵՐ ՄԵԼԸՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱԿԻՆ ՄԷՋ

Սակ՝ 10,000 եւ 5,000 լիբ. ոսկի
Տոմսերը կարելի է ստանալ Տիւրքիոյ Ճէրա, Համազգայինի գրախանութ «Շաղոյեան» կեդրոն, ՕԵԼԻՃ գրախանութ՝ Անթիլիաս, Համազգայինի «Լեւոն Շանթ» կեդրոն, եւ ելոյթի օրերը կ'իջէ:

Մանկապատանեկան

ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԷՆ...


Մենք բոլորս ունեցած ենք մեծ հայրերու, մեծ հայրերու, մեծ հայրերու... մեծ հայրեր: Սակայն ինչի՞ կը նմանէին անոնք: Գիտնականները աշխարհի չորս կողմերէն գտած են շատ հին ոսկորներ եւ փորձած են վերակազմել այդ նախահայրերուն կերպարանքը:



1) ՄԻԼԷՆԻՈՒՄ ԱՆՍԵՍՏՐԻ
Տարիք - 6 միլիոն տարի:
Կը սիրէր - Երկու ոտքերուն վրայ քայլել:
Գտնուած - 2000 թուականին վերջաւորութեան:
Ո՞ր - Քենիոյ մէջ:

Ամէնէն հին՞ըր - Գիտնականները այնքան հպարտ էին այս ոսկորները նոր գտնուած սկիզբ:

վրայ մազլցիլ:
Գտնուած - 1974ին:
Ո՞ր - Եթովպիոյ մէջ:
Ամէնէն հնչակաւորը



ըր գտնելով, որ զայն անուանեցին Միլենիոմ Անսեսթրը: Ան հանրածանօթ Լուսինէն երկու անգամ աւելի ծեր է, սակայն աւելի զարգացած էր: Գտնուած են 13 ոսկորի կտորներ՝ մատի, թեւի, բարձուկի, կզակի եւ ակոսի: Վերջապէս, անոր մաշած ակոսի մնացորդը կը հաստատէ, թէ ան ամբողջովին բուսակեր չէր...

2) ԼՈՒՍԻ
Տարիք - 3,2 միլիոն տարի:
Կը սիրէր - Ծառերուն

- «Լուսի» գտնող խմբակը կ'ենթադրէ, թէ ան մեծած է ինչի մը մէջ խեղդուելով: Սկիզբը գիտնականները կը կարծէին, թէ ան մարդկութեան «մեծ մայրն» էր: Սակայն քննութիւններէ ետք անոնք եզրակացուցին, թէ ան զաւակ չէ ունեցած, հետեւաբար ժառանգորդներ ալ չէ ունեցած: Ան շատ կարճ էր - երբ կը վախնար, իր հին բնազդին հետեւելով՝ ան միջապէս ծառերու ճիւղերուն կը կառչէր: Սակայն, ան իր ժամանակը կ'անցընէր պարզապէս

զրուելու բարձր պտտելով Ափրիկէի արեւուն տակ: Նոյնիսկ եթէ Լուսի մեր ամէնէն հին կամ ամէնէն զեղեցիկ նախահայրերէն չէ, ան ամէնէն լաւ պահուածն է:

3) ՄՈՒՆԿՈՅԻ ՄԱՐԴԼ
Տարիք - 60 հազար տարի:
Կը սիրէր - Որսալ:
Գտնուած - 2000 թուականին:
Ո՞ր - Աւստրալիոյ մէջ:

Ամէնէն երիտասարդը - Աւստրալիոյ մէջ գտնուած Մունկոյի մարդը կրնայ ըլլալ մարդկութեան մէկ մասին «հայրիկը»: Ան բաւական երիտասարդ է՝ բաղադրուած Լուսին կամ Միլենիոմ Անսեսթրին: Ան հաւանաբար եկած է Չինաստանէն, եթէ նկատի առնենք անոր գանկին ձեւը, եւ շարունակած է իր զարգացումը Աւստրալիոյ մէջ:

Անոր նախահայրերը հաւանաբար հասած են Թիմոր ծովէն, որ այդ ժամանակաշրջանին կը գտնուէր միայն 100 քմ. հեռու: Որսորդութեան դաշտեր փնտռելու համար անոնք խառնուած են ժամայէն 40 հազար տարիներ ետք եկած Հոմո - էրէքթիւսներուն հետ եւ ծնունդ տուած՝ ապրիիցիներուն:

ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐ ԱՆՎԵՐՁ ՎԷ՞Ր



Կեանքը դիրքին չէ քոյր-եղբայրներու միջեւ, նոյնիսկ եթէ անոնք զիրար շատ կը սիրեն...

Յաճախ նախանձն է պատճառը, որ վէճեր կը ստեղծէ քոյրերու եւ եղբայրներու միջեւ: Իւրաքանչիւր մանուկ ունի իր տեղը ընտանիքին մէջ: Երբեմն անոնցմէ իւրաքանչիւրը կը մտածէ, թէ միւսին դիրքը ամէնէն լաւն է:

Բարեբախտաբար կան նաեւ ժամանակներ, երբ քոյրերը եւ եղբայրները լաւապէս կը հասկնան զիրար, միասին կը խօսին, կը խաղան... Անոնք կը բաժնեկցին պոնպոնները:

ՆՇԱՆԱՌՔՐՈՅՐԵՐ ԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ Ո՞Վ ԵՆ ԱՆՈՆՔ

1) Օկիւսթ եւ Լուի շարժապատկերը հնարեցին 1895 թուականին:
2) Մայքլը ընտանիքին եօթներորդ զաւակն է: Իսկ Ճաննթը՝ ընտանիքին իններորդը եւ վերջինը: Վստահաբար լսած ես երգի աշխարհի մէջ այս երկու նշանաւոր աստղերուն մասին:



3) Ժոզէֆ եւ էթիէն հնարած են տաք օդով փուչիկը՝ 1783 թուականին, որուն տուած են իրենց անունը:

4) 1810 թուականներուն ձէջըպ եւ Ուիլհէմ հաւաքած են նշանաւոր հեքիաթներ, որոնց կարգին՝ «Ձիւնաթոյրը» եւ «Հանսը եւ Կրէթըլը»:


5) Չիքո, Հարփո, Կրուչո եւ Չեփո միասին խաղացած են կատակերգական ժապաւէններու մէջ: 1930ական թուականներուն: Բնաւ տեսած ես «էնայթ էթ տը Օփերա» կամ «Տաք սուկը»:

(ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ՝ ԷՋ 8)


Ժ Ա Մ Ա Ն Յ




Ո՞ր առարկան մաս չի կազմեր ընդհանուր խումբին:



Գունաւոր ներկէ օդանաւին ձգած հետքը:



Վարի 3 տուփիկներէն ո՞ր մէկը մաս չի կազմեր վերի պատկերին:



Աստղանիշ մը դիր այն անասուններուն ջով, որոնք մտակեր են, իսկ կլոր մը՝ բուսակեր անասուններուն ջով:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ՄԹՆՈԼՈՐՏԻՆ ՄԷՋ ՕԶՈՆԻ ԽԱԻԻՆ ՎԻՃԱԿԸ...

... Շատ աւելի լաւ է: 1980ական թուականներուն գիտնականները յայտարարեցին, թէ «ծակ» մը կար օդոնի խաւին մէջ, նաղաղականի վերեւ:

Երկրագունդէն 20-50 քմ. հեռաւորութեան վրայ գտնուող օդոնի այս խաւը մեզ կը պաշտպանէ արեւուն շատ վտանգաւոր անդրմանի-

շակագոյն ճառագայթներէն: Սակայն օդոնը ունի մեծ թշնամի մը քլորը, որ զայն կը փճացնէ: 20րդ դարուն մարդիկ շատ գործածած եւ դէպի մթնոլորտ արտանետած են քլոր պարունակող նիւթեր՝ CFC, որոնք կը գտնուին սփրէյներուն եւ գոլփացուցիչ մեքենաներուն (էքսպլոզիւթը) մէջ:

1987 թուականին 183 երկիրներ որոշեցին CFC փոխարինելու ընդհանուր օրով, որոնք նուազ կը վնասեն օդոնին: Ըստ երեւոյթի, այս լուծումը լաւ էր: 15 տարի ետք ծակը տակաւին հսկայ է, սակայն ան դադարած է աւելի լայնալի: Միացեալ Ազգերու կազմակերպութեան մասնագէտներ կը հաստատեն, թէ ծակին մեծութիւնը պիտի նուազի 2010 թուականէն սկսեալ, եւ օդոնի խաւը վերակազմուած պիտի ըլլայ 2050ի շուրջ:

Երկրագունդը փրկուած է: Կրնայ ըլլալ, եթէ CFC արտադրութիւնը իսկապէս դադարի բոլոր երկիրներուն մէջ: Յուրտն ալ կը նպաստէ օդոնի փճացումին:

ԱՅԼԱԶԱՆ

ՄԱՐԴԱԿԱՊԻԿՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Տարօրինակ երգի ձայնապնակ մը շուկայ իջած է Միացեալ Նահանգներու մէջ: Բոլոր երգերուն բառերը հնարուած են Քոթոյի կողմէ: Քոթո... էջ մարդակապիկ մըն է:

Քոթո սորված է խուլներուն կողմէ գործածուած նշաններու լեզուն եւ իր գրութիւնները փոխանցած է մարդոց, որոնք կ'երգեն ձայնապնակին մէջ:

ԱՆՁՐԵԻԻ ՄԵՔԵՆԱՆ

Սկովտիացի գիտնական մը հնարած է անձրեւաբեր մեքենայ մը: Ան կը նմանի հաւկիթ գարնող հսկայ մեքենայի մը՝ նաեւ մը վրայ դրուած. ան ծովուն ջրերը կ'անէ եւ զայն ամպի կը վերածէ:

Այս մեքենան կրնայ օր մը երաշտի հարցեր լուծել:

Վ. Բ. Ը. Մ. - Վ. Ե. Ը. «ԱՆՂՐԱՆԻԿ» ՄԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԻՈՒԹԻՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Վ. Բ. Ը. Մ. - Վ. Ե. Ը.ի «Անդրանիկ» Մշակութային Սիոութեան կազմակերպած

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐՈՒ ՅՈՒՑԱԴՐՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿԻ

Կիրակի, 9 Մարտ 2003ին, տոմսերը սպառած են:

Յուցարկութիւնը պիտի կրկնուի Կիրակի, 16 Մարտ 2003ին, երեկոյեան ժամը 6:00ին, Le MERIDIEN COMMODORE պանդոկ, Կամրա:

Տոմսերը ապահովելու համար դիմել Վ. Ե. Ը.ի Կեդրոնական Գրասենեակ, հեռ. 04-523043/4:


ASHJIAN TOURS
ՈՒՍԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՐՋԱՊՈՅՈՅՆԵՐ

1.- 27 Մարտ 4 օր SHARM EL SHEYKH միայն 222\$:
2.- 19 24 Ապրիլ Հայկա, Տր 2օր, Հասիէ, Մարկաւտ, Գամշի, Թոմոր, Դամասկոս լճան պտոյտներով Ա. կարգի պանդոկ 125\$, 130\$, 140\$, 154\$, 160\$:
3.- 2 9 Մայիս Հայաստան 339\$ եւ 399\$ պտոյտներով:
4.- Ամէն շաբաթ 4 օր ԿիՊՐՈՍ միայն 199\$:
Կը վաճառենք օդանաւի տոմսեր:

ARMENIAN AIRLINES՝ SALES AGENT
Հեռ. 01/261177 - 240654 - 03/233978

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԻՐԱՆԻ ՄԵՋ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՅՑԱՒ ԱՌԱՋԻՆ

Իրանի մէջ երէկ աւարտեցան մարմնամարզի միջազգային մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը բերաւ նաեւ Հայաստանի հաւաքականը։

Հայաստանի հաւաքականը ոչ միայն գրաւեց ընդհանուր դասաւորման առաջին դիրքը, այլեւ հնձեց 40է աւելի մետալներ, որոնց կարգին՝ 20 ոսկի մետալներ։

Մարմնամարզի մրցումներուն իրենց մասնակցութիւնը բերին տասը երկիրներ։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՐԱԹՎԱԿԵՐՁԸ

– ԱՅՍՕՐ՝ ՀՈՌՍ ԲԱՂԱՔԻ ՏԵՐՊԻՆ – ՎԱՂԸ՝ ՄԱՐՍԷՅ – ՓԱՐԻՋ Ս. Ժ.

Շարժափոփելի, եւրոպայի դաշտերուն վրայ տեղի կ'ունենան ախոյեանութեան մրցումները, որոնց ընթացքին տեղի պիտի ունենան բաւական հետաքրքրական եւ տաք հանդիպումներ։

Սակայն ամէնէն կարեւոր ճակատումներէն մէկը պիտի ըլլայ Ֆրանսայի մէջ տեղի ունենալիք Մարսէյ – Փարիզ Սէն Ժերմէն մրցումը, ինչպէս նաեւ Հոմբրգաբաքի տերպին՝ Ա. Էս. Ռոմայի եւ Լացիո Ռոմայի միջեւ։

Ստորեւ՝ շարժափոփելի մրցումներուն յայտագիրը (ժամերը միշտ պէտք է նկատի ունենալ Պէյրոսի ժամով)։

●ՖՐԱՆՍԱ. (30ԴՂ ՀԱՆԳՐՈՒԱՆ)

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Ռեմս – Օքսեո	18:15ից
Պարիս – Սքրապուրկ	21:00ից
Լանս – Նիս	21:00ից
Լիոն – Ամպրիօ	21:00ից
Մոնպերո – Պարիս	21:00ից
Նանց – Լը Զաւր	21:00ից
Սրտան – Կլեմկան	21:00ից
Սոչո – Լիլ	21:00ից
Թրուա – Մոնփելիէ	21:00ից

ՎԱՂԸ

Մարսէյ – Փարիզ Սէն Ժերմէն	21:45ից
---------------------------	---------

●ԲԱԼՂԻՕ (24ԴՂ ՀԱՆԳՐՈՒԱՆ)

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Պոլոնիա – Ինքեր Միլան	19:00ից
Ա. Էս. Ռոմա – Լացիո Ռոմա	21:30ից

ՎԱՂԸ

Աթլանթա – Փարմա	16:00ից
Բոմո – Պրեշլա	16:00ից
Էմփոլի – Փիաչենցա	16:00ից
Մոտենա – Փերուցիա	16:00ից
Թորինո – Ռեցինա	16:00ից
Ուտինեգէ – Եուվեթթուս	16:00ից
Ա. Սէ. Միլան – Բիելո	21:30ից

●ՍՊԱՆԻԱ (25ԴՂ ՀԱՆԳՐՈՒԱՆ)

ԱՅՍՕՐ	ԺԱՄԸ
Ռեալ Մատրիտ – Ռասիոն Եւրոպայի	20:00ից
Տեփորթիս Բարսելոնա – Վիարեալ	21:45ից
Պարսելոնա – Ռեալ Վալադոլիտ	22:00ից
Վալենցիա – Աթլետիկո Մատրիտ	22:30ից

ՎԱՂԸ

Մալկա – Աթլետիկո Պիլկո	18:00ից
Մալորքա – Ռեալ Պելլիս	18:00ից
Ռալո Վալենցիա – Սելթա Վիլո	18:00ից
Ռեքրեաթիւս Զուլտա – Էսպանիոլ	18:00ից
Սելթա – Օսասունա	18:00ից
Ռեալ Սոսիեդադ – Ալաւես	21:30ից

●ԱՆԳԼԻԱ (Բաժակի մրցաշարի քառորդ աւարտականի մրցումներ)

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Արսենալ – Չելսի	18:15ից

ՎԱՂԸ

Շեֆիլդ Եւրոպայի – Լիօ	13:30ից
Ուաթֆորտ – Պրեմիեր	15:30ից
Սաութհեմթթոն – Վուլվզ	18:00ից

●ՊՈՒՆԵՍՆԻԱ (24ԴՂ ՀԱՆԳՐՈՒԱՆ)

ԱՅՍՕՐ	Պորուսիա Մեոնընկլայտպախ – Պորուսիա Տորֆմուն
Պայերն Միլհիթ – Պայեր Լեյքերտլըն	
Վերտեր Պրեմեր – Պոլոն	
Հերթա Պրիլից – 1860 Միլհիթ	
Շրոթֆալք – Համպուրկ	
Շալքե – Արմիլիա Պիլֆելտ	
Վոլֆսպուրկ – Քորպուս	

ՎԱՂԸ

Քայլերպալուրբեր – Նիլբեմպերկ	
Հանովեր 96 – Հանգա Ռոսթր	

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅՏԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ Ը.Ս.Ը.Ս. - ԹԱՏԱՄՈՆ ՆԱՊԱԹԻԵ

Լիբանանի ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 18րդ հանգրուանի բացման մրցումին, երէկ, Պուրձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ Ռասիոն կրեց եղանակի իր 7րդ պարտութիւնը, այսինքամ՝ Աիլի Սայտայէն, 3-2 արդիւնքով։ Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, իսրայի կապը առժամաբար գրաւեց 8րդ դիրքը (17 կէտով)։

Ռասիոն, որ Չորեքշաբթի 17րդ հանգրուանէն յետաձգուած մրցումի մը 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց Հըրրիէ Մաժալը Այնճարը, այժմ կը գրաւէ 4րդ դիրքը՝ 23 կէտով։

18րդ հանգրուանին այսօր տեղի կ'ունենան երկու մրցումներ, իսկ վաղը՝ երեք ճակատումներ։

Պարագուուի դիրքը գրաւող Հ.Ս.Ը.Ս., որ ցարդ անպարտելի միակ խումբն է, իր մրցումը կը կատարէ վաղը՝ Կիրակի, Պուրձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, հիւրընկալելով Թատամոն Նապարիէն։ Մրցումը տեղի

կ'ունենայ ժամը 3:00ին։

Երկու օր առաջ իր գումարած ժողովին, Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնը, թէեւ վաւերացուց Լիբանանի ֆուտպոլի բաժակի մրցաշարքին 1-16րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, սակայն անոր տուած որոշումներէն մէկը ծանր պարտեց Հ.Ս.Ը.Ս.ի ֆուտպոլի խումբին, նկատի ունենալով, որ անիկա մէկ ամիսով կախակայեց Հ.Ս.Ը.Ս.ի մարզիկներէն Վարդան Ղապարեանը, որ Մաֆայի դէմ տեղի ունեցած մրցումին (բաժակ) իր երկրորդ դեղին քարտը ստանալով, կարմիր քարտ մը ստացած էր։ Անոր պատիժը կը սկսի 5 Մարտէն եւ կ'աւարտի՝ 4 Ապրիլին։

Ֆետերասիոնին տեղեկագրին մէջ կ'ըսուի, թէ Վարդան Ղապարեան ոչ մարկայել կեցուածք մը ունեցած էր մրցակից կապմին մարզիկներուն եւ իրաւարներուն հանդէպ՝ հիմնուելով օրուան իրաւարարին տեղեկագրին վրայ։

Վարդանի բացակայութիւնը երբեք պէտք չէ պարտ խումբին արձանագրելիք արդիւնքներուն վրայ, ինչ որ ալ ըլլան պարագաները։ Խումբին մաս կապմող իւրաքանչիւր մարզիկ այժմ յաւելալ պատասխանատուութիւն մը ունի, որպէսզի խումբը չկաղայ եւ շարունակէ իր յաղթական երթը։

Յառաջիկայ չորս մրցումներուն ընթացքին, յաջորդաբար՝ Թատամոն Նապարիէի, Իժթիմահիի, Շապապ Թրիփոլիի եւ Ռիատա Ուալ Ստապիի դէմ, Հ.Ս.Ը.Ս.ի մարզիկներէն կը սպասուի ըլլալ վճռական եւ պահուովել առաւելագոյն 12 կէտերը, հոգ չէ, թէ դաշտին վրայ իրենց խմբակիցը՝ Վարդան Ղապարեան պացակայ է։

Երթի մրցումին, Թատամոն Նապարիէի դէմ 3-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած Հ.Ս.Ը.Ս. վաղը եւս յաղթանակ մը պիտի նուիրէ իր համակիներուն, որոնք անկասկած պիտի լեցնեն Պուրձ Համուտի Քաղաքապետարանի

դաշտին թրիպիւնները։

Սաֆայի դէմ տեղի ունեցած մրցումին դեղին քարտ մը ստացած Սազո Տոնապետեան բաժակի մրցաշարքին գծով մէկ մրցումով կը կախակայուի։ Ան Աիտի դէմ տեղի ունենալիք քառորդ աւարտականի երթի մրցումէն պիտի բացակայի, մինչ դարձի մրցումին դաշտ կրնայ ներկայանալ։

Բաժակի մրցաշարքին 1-16րդ հանգրուանի վերջին մրցումը տեղի կ'ունենայ յառաջիկայ Հինգշաբթի, 20 Մարտին՝ Նըժմէի եւ Պըրժի միջեւ։ Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 3:00ին՝ Մարզական Աւանին մէջ։

Ստորեւ՝ Բ. դասակարգի ախոյեանութեան 18րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 3:00ին)։

ԱՅՍՕՐ

Մահապա - Ռիատա Ուալ Ատապ	ԴԱՇՏ
Հ.Ս.Ս. - Իժթիմահի	Պ. Համուտ

ՎԱՂԸ

Հ.Ս.Ը.Ս. - Թատ. Նապարիէ	Պ. Համուտ
Իսլահ - Հըրրիէ	Իսլահ
Նահաա - Շապ. Թրիփոլի	Խիարա

Ստորեւ՝ Ա. դասակարգի ֆուտպոլի ախոյեանութեան 15րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը։

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Սաթես - Շապ. Սահէլ	3:00ից	Ժուհիէ
Նըժմէ - Սաֆա	3:00ից	Մ. Աւան
Աիա Ալէյ - Օլիմփիք	4:45ից	Պէյրուք

ՎԱՂԸ

Սալամ - Անար	3:00ից	Թրիփոլի
Պըրժ - Թ. Սուր	3:00ից	Մ. Աւան
Ահտ - Մապարա	4:45ից	Պէյրուք

Հ. Ս. Ը. Ս. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ երեքշաբթի, 11 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Արալեան» Հ.Ս.Ը.Ս. Մարզաճակատային Համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ։

Անդամներուն ներկայութիւնը խիստ փափաքելի է։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ. Ս. Ը. Ս. ՊԵՅՐՈՒԹ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հ. Ս. Ը. Ս. Պէյրուքի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 10 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:00ին, մասնաճիւղի ակումբին մէջ։

Անդամներուն ներկայութիւնը խիստ փափաքելի է։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ. Ս. Ը. Ս. ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հ. Ս. Ը. Ս. Պուրձ Համուտի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 11 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Ազիբեան» ակումբի «Ատուր Գապագեան» սրահին մէջ։

ԾԱՆՕԹ. Երեկոյեան ժամը 8:30ին ներկայանալու թիւը մեծաճանաչութիւն պիտի նկատուի։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԵԹՊՈԼ

ՎԱՂԸ՝ ԱՆԴՐԱՆԻԿ - ՍԱԺԵՍ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Լիբանանի պատեթպոլի աղջկանց բաժակի մրցաշարքի աւարտականին, վաղը՝ Կիրակի, Ղազիրի դաշտին վրայ տեղի կ'ունենայ (ժամը 17:00ին) Անդրանիկ - Սաթէս Մար Տուժէթ մրցումը։ Անդրանիկ աւարտականի իր տոմար պահպանած էր պարտութեան մատնելով Հ.Ս.Ը.Ս. Պէյրուքը (72-37), իսկ Սաթէս՝ Հ.Ս.Ը.Ս. Անթիլիասը (72-47)։

«ՖՈՐՄԱԿԱ 1»

ՎԱՂԸ՝ ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻՆ

«Ֆորմալա 1»-ի 2003ի աշխարհի ախոյեանութեան առաջին կրան փրին սովորականին նման կը սկսի Աւստրալիոյ Մելբուռն քաղաքին մէջ, վաղը՝ Կիրակի, 9 Մարտին։ Փոլ - փոփոքնի մրցումները տեղի կ'ունենան Շարթի Կիրակի լուսող գիշերը, իսկ կրան փրին մրցումը՝ Կիրակիէն Երկուշաբթի լուսող գիշերը։ Հետեւաբար Պէյրուքի ժամանակացոյցով եթէ նկատի ունենանք անոնք, «Ֆորմալա 1»-ի սիրահարները ստիպուած պիտի ըլլան իրենց քունը «չոհել» ուղղակիօրէն պատկերասփիւռէն անոնց հետեւելու համար։

Ստորեւ՝ կը ներկայացնենք «Ֆորմալա 1»-ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 16 կրան փրիններուն յայտագիրը։

Մարտ 9. Աւստրալիա, Մելբուռն
Մարտ 23. Մալեպիա, Սեփանկ
Ապրիլ 6. Պրապիլ, Սան Փաուլո
Ապրիլ 20. Սան Մարինո, Իմոլա
Մայիս 4. Սպանիա, Պարսելոնա
Մայիս 18. Աւստրիա, Սփիլպերկ
Յունիս 1. Մոնաքո, Մոնթէ Բարլո
Յունիս 15. Բանատա, Մոնթէալ
Յունիս 29. Եւրոպա, Նիւրպիւրկրինկ
Յունիս 6. Ֆրանսա, Մանի Բուր
Յունիս 20. Բրիտանիա, Սիլվըրսթոն
Օգոստոս 3. Գերմանիա, Հոքընհայմ
Օգոստոս 24. Հունգարիա, Հունկարորինկ
Սեպտեմբեր 14. Իտալիա, Մոնպա
Սեպտեմբեր 28.

Մ. Նահանգներ, Ինտիանապոլիս
Հոկտեմբեր 12. Ճափոն, Սուլուքա

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ԲԱԳԻՒՆ

ԱՇՈՒՆ, 4 - 2002

40 ԱՄԵԱԿ

1962-2002

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ժ. ԱԹԱՐԵԱՆհնճոյ եւր լայն
8. Ս. ԲԻԼԵՃԵԱՆ
Բանաստեղծութիւններ	
19. ՃԱՀԱՆԳՈՒՄՏՍաքրուհի
37. Փ. ՃԵՐԱՆԵԱՆ
Աղուորներու յիշատակին	
Փ. ՃԵՐԱՆԵԱՆՍիրտ իմ
38. Վ. ՃՈՒՅԱՆԵԱՆՕրագիր
51. ԱՐՄԱՆՏ
Բանաստեղծութիւններ	
56. Ս. ԳԵՐԻՃԵԱՆԱմառային անձրեւ...
72. ՎԱՐԱՆԳՏաղաւար
74. Մ. ԻՍԱԶԱՐԱՏԳիշերային սպասում
Թատերգութիւնը	
75. Ժ. Փ. ՍԱՐԹԵՐԴոնիպակ
97. ***
Ուղղագրական մակընթացութիւն	
101. Լ. ՎԱՍՍԱՐՈւղղագրական
101. Լ. ԸՆԿՎԵՐԴԵԱՆՎկայութիւն մը...
102. ***
Այլազանիկոս - փոքրէտերները...	
103. Ռ. ՅՈՎԱԵՓԵԱՆ
Վերջնագրի լեզուն	
106. Մ. ԵՐԱՍԵԱՆՄամուլին դերը սփիւռքային բանաստեղծութեան հողովոյթին մէջ
113. ***
«Չարեցեան ընթերցումներ»	
114. Լ. ՄԱՅՐԱՎԱՆԵԱՆ
134. ***Չարեցեան «Բագին» անագրի էջերում «Ուստա Կարո» վէպի տպագրական առասպելը...
151. ***Մշակութային լուրեր
157. ***

«Բագին»-ի 2002 թուականի բովանդակութիւնը

